



Երկրաշարժ՝ Իսպանիայում



Իսկական փրկարարի նման



Էլեկտրահաղորդագծերի հրդեհավտանգավորությունը



«Լեզվի փակ փուլը չունեն»



ով իրագրեցված է, նա թաշտոանված է արտակարգ թերթ

N 17 (386)

13.5.2011 - 19.5.2011

www.emergency.am

Լրատվությունը կյանքեր է փրկում 8 փարի՝ ձեր կողքին



Ուղիղ 8 տարի առաջ՝ 2003 թվականի մայիսի 15-ին լույս տեսավ «Արտակարգ թերթի» առաջին համարը:

«Աստված փրկում է նրանց, ովքեր ցանկություն ունեն փրկվելու»:

Որպես հիմք ունենալով այս կուռ փիլիսոփայությունը, որի արմատները թերթի հիմնադիրները փնտրել ու գտել էին Հին Կտակարանում, «Արտակարգ թերթը» սկսեց իր գործունեությունը պարբերաբար, շաբաթ առ շաբաթ, իր ընթերցողներին (իսկ թերթը հասցեագրված էր բոլորին՝ առանց բացառության),

պատմելով աշխարհում ու երկրում տեղի ունեցող եւ հնարավոր արտակարգ իրավիճակների մասին, դրանց բնույթի մասին, վստահորեն հայտարարելով, որ աղետների դեմ պայքարը յուրաքանչյուր պետության սրբազնագույն պարտքն է: Այսօր, ութ տարվա հեռվից պարզ երեւում է, որ «Արտակարգ թերթը» հաջողել է, որ բավական մեծ է եղել թերթի ընդգրկումը. երկրաշարժերից, հեղեղներից, հրդեհներից ու դրանց դեմ պայքարելու եղանակներից մինչև հոգեբանական անվտանգության մասին անկեղծ գրույցներ, ճանապարհատ-

րանսպորտային պատահարներից մինչև պատմության խորքերում հանգրվանած աղետներ ու աղետյալներ, համապատասխան թեմաներով լուրջ գիտական ուսումնասիրություններից մինչև առաջին օգնության հնտություններ...

«Արտակարգ թերթի» տարեդարձի առթիվ շնորհավորում ենք խմբագրության աշխատակազմին եւ ընթերցողներին:

Մեր ու ձեր նշանաբանը նույնն է՝

Ով իրագրեցված է, նա պաշտպանված է:

Ճապոնիա. 2 ամիս անց

Մարտի 11-ի երկրաշարժից, դրան հաջորդած ցունամիից եւ «Ֆուկուշիմա-1» ԱԷԿ-ում տեղի ունեցած ռադիացիայի արտահոսքից հետո առաջին անգամ ճապոնիայի կառավարությունը թույլ է տվել տարհանման գոտում գտնվող Կավաուչի գյուղի բնակիչներին մի քանի ժամով այցելել իրենց տները:

դոզիները: Տարածքում թուլատրվել է մնալ ընդամենը երկու ժամ: Դրանից հետո Կավաուչիի բնակիչները տեղափոխվել են դպրոցի շենք, որտեղ պետք է բժշկական քննություն անցնեին:

Կառավարությունը դեռ անցյալ ամսվա վերջին էր հայտարարել, որ հնարավորություն կտա «Ֆուկուշիմա-1» ԱԷԿ-ի շուրջ



92 ճապոնացիների կազմակերպված ճամփորդությունը տեղի ունեցել էր երեքշաբթի օրը՝ տեղական ժամանակով ժամը 12-ին: Գյուղի բնակիչներն սկզբում տեղավորվել են դպրոցին մոտ գտնվող մի տան մեջ, ապա երկու խմբով հասցվել իրենց տների մոտ:

Ճապոնացիներին քիմիական պաշտպանության հատուկ հագուստներ են տրվել, ինչպես նաև

բնակվողներին կարճ ժամանակով այցելել իրենց տները:

Ճապոնական կառավարության հայտարարության համաձայն, օտարման գոտի վերադառնալու թույլտվություն կտրվի ընտանիքի մեկ անդամի: Սակայն այդ թույլտվությունը չի վերաբերում այն բնակավայրերին, որոնք ատոմակայանից երեք կիլոմետր շառավղով են տեղակայված:

Լեզենդար Միսիսիպին սպառնում է հեղեղել ԱՄՆ-ը

Ուժեղ անձրևների հետևանքով ԱՄՆ-ի ամենախոշոր գետերից մեկի՝ Միսիսիպիի մակարդակը ռեկորդային բարձրության է հասել՝ սպառնալով հեղեղել ափամերձ շրջանները: Տարհանվել են հազարավոր մարդիկ:

Ջրի ամենաբարձր մակարդակը գրանցվել է Թենեսի նահանգի Մեմֆիս քաղաքի մոտ, որտեղ այն ընդամենը մի քանի սանտիմետրով է գիջում 1927 թվականի ռեկորդային ցուցանիշին:

Մեմֆիսի իշխանություններն արդեն բացել են ջրահեռացման արգելակները, որպեսզի նվազեցվի ջրի ճնշումը եւ հոսանքը գոնե մասամբ ուղղվի դեպի ավելի ներքեւ ընկած Նյու-Օռլեան գետը:

Մեմֆիսի մետերոլոգիայի ներկայացուցչի խոսքով, երկուշաբթի կեսօրին գետի մակարդակը մոտ 14.6 մետր է եղել: Նա կանխատեսել է, որ իրավիճակը շրջանում կշարունակվի ամենաքիչը ութ օր, որի ընթացքում Միսիսիպին կարող է գերազանցել իր նախորդ բոլոր ռեկորդները:

Իշխանությունները խորհուրդ են տվել վտանգավոր գոտուց հեռանալ 1300 տների բնակիչների եւ զգուշացրել են, որ հնարավոր ջրհեղեղները կարող են վնաս հասցնել անշարժ գույքի 3000 օբյեկտի:

Քաղաքում իրավիճակը բարդանում է այնքանով, որ ջուրը



ծածկել է արդյունաբերական շրջանը, եւ ջրում առողջության համար վտանգավոր բազմաթիվ նյութեր են թափանցել: Քաղաքի պատմական հատվածում ջրի մակարդակը 10-20 սմ է: Մեմֆիսի իշխանությունները վստահեցնում են, որ պատրաստ են հնարավոր ցանկացած դժվարությունների:

1927 թվականին Միսիսիպիում տեղի ունեցավ այսպես կոչված «Մեծ ջրհեղեղը», որն ամենախոշորներից էր ԱՄՆ-ի պատմության մեջ. ավերածությունների ծավալով դրա հետ կարող է համեմատվել միայն 2005 թվականի «Կատրինա» փոթորիկը: Այն ժամանակ ջրհեղեղը վնասներ էր հասցրել երկրի հարավի եւ կենտրոնական արեւմուտքի

տասը նահանգների:

1927 թվականի ապրիլի 15-ին տեղացած հորդառատ անձրևի ժամանակ, 18 ժամվա ընթացքում 15 սանտիմետր տեղումներ էին գրանցվել: Գետը դուրս էր եկել ափերից, իսկ ջրի հոսանքը, երկու անգամ գերազանցելով Նիագարայի ջրվեժի ուժը, քանդել էր Գրինվիլի ամբարտակը: Միսիսիպի ամբարտակի գիծը քանդել էր 145 տեղում եւ հեղեղել 70 հազար քառակուսի կիլոմետր տարածք: Հեղեղման խորությունը տեղ-տեղ հասել էր տասը մետրի: 1927 մայիսին Միսիսիպիի լայնությունը Մեմֆիս քաղաքի մոտ կազմում էր 97 կմ: Ջրհեղեղի հետևանքով զոհվեցին հարյուրավոր մարդիկ, 700 հազարը մնաց անօթեւան:



ԱԻՆ
միացյալ հեռախոսահամարն է
1-01

Պայթել է թթվածնի բալոն

Մայիսի 5-ին, ժամը 14.30-ին տեղեկություն է ստացվել, որ Սյունիքի մարզում՝ Ազարակի պղնձամուլիբդենային կոմբինատի հարստացման կոմբինատին հարակից շինհրապարակում տեղի է ունեցել թթվածնի բալոնի պայթյուն:

Պատահարի հետևանքով շինարարության աշխատակիցներ՝ Կապանի բնակիչ, 1989 թ. ծնված Երուարդ Ավետիսյանը եւ Ազարակի բնակիչ, 1988 թ. ծնված Վազգեն Գրիգորյանը ստացել են տարբեր վնասվածքներ ու տեղափոխվել Ազարակի հիվանդանոց: Տուժածների առողջական վիճակը բավարար է:

Կեղծ ահազանգ

Մայիսի 5-ին, ժամը 14.34-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Տիգրան Մեծի պողոտայում՝ Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական տարածքների դատարանի շենքի տարածքում պայթուցիկ սարք է տեղադրված:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ, ԵԿԿ օպերատիվ խումբը՝ պարանտեղիկներով, եւ հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

ԱԾԾ եւ ոստիկանության կինոլոգիական խմբերն ու ՊՆ սակրավորներն իրականացրել են շենքի զննում, որի արդյունքում պայթուցիկ սարք չի հայտնաբերվել:

միջազգային լուրեր

Երկրաշարժ՝ Իսպանիայում

Մայիսի 11-ին Իսպանիայի Մուրսիա ծովափնյա շրջանում երկու ժամ տարբերությամբ երկու ստորգետնյա ցնցում է գրանցվել՝ 4,4 եւ 5,2 մագնիտուդ ուժգնությամբ: Ցնցումներն առավել զգալի են եղել Լորկա քաղաքում: Վերջին տվյալներով՝ զոհվել է 10 մարդ, կան տասնյակ տուժածներ:



Լորկա քաղաքում երկրաշարժի հետևանքով վնասվել են բազմաթիվ շենքեր, այդ թվում՝ միջնադարյան եկեղեցու աշտարակը եւ մի քանի այլ պատմական շինություններ: Տասնյակ ավտոմեքենաներ

Դեղորայքային թունավորում

Մայիսի 5-ին, ժամը 15.58-ին տեղեկություն է ստացվել, որ դեղորայքային թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Երեւանի Երկաթուղայինների 3-րդ փողոցի թիվ 2 տան բնակչուհի՝ 1961 թ. ծնված Սվետլանա Ավետիսյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

• Մայիսի 6-ին, ժամը 17.12-ին տեղեկություն է ստացվել, որ դեղորայքային թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Երեւանի Բագրատունյաց 39 շենքի 53-րդ բնակարանի բնակչուհի, 1978 թ. ծնված Նարինե Սարգսյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը միջին ծանրության է:

Դիակ՝ ձորում

Մայիսի 5-ին, ժամը 17.00-ին ահազանգ է ստացվել, որ Արագածոտնի մարզի Օհանավան գյուղում՝ Եկեղեցուն հարակից ձորը տղամարդ է ընկել եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը:

Փրկարարների ուժերով ձորից (50-60 մ խորությունից) դուրս է բերվել Երեւանի բնակիչ, 1946 թ. ծնված Զրանտ Արամյանի դին եւ հանձնվել շտապօգնության բրիգադին:

Դիակ՝ ջրանցքում

Մայիսի 8-ին, ժամը 12.33-ին տեղեկություն է ստացվել, որ Կոտայքի մարզում՝ Արզնի-Շամիրամ ջրանցքում հայտնաբերվել է դիակ եւ այն դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Ջրանցքի 37-րդ կմ-ում՝ Աշտարակի ձորի ջրաբաշխիչ կայանի հատվածում փրկարարները ջրից դուրս են բերել մարզի Ջորավան գյուղի բնակիչ, 1941 թ. ծնված Աշոտ Սարգսյանի դին եւ հանձնել իրավապահ մարմիններին:

Փամբակը ողողել է ափերը

Մայիսի 5-ին, ժամը 17.40-ին ահազանգ է ստացվել, որ Լոռու մարզի Դուրսալ գյուղում տեղացած հորդառատ անձրեւից Փամբակ գետում ջրի մակարդակը բարձ-

րացել է ու ողողել ափամերձ շինությունները:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարական վարչության օպերատիվ խումբը:

Պարզվել է, որ ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ողողվել են ոռոգման ջրի համակարգի շինությունը եւ Զ. Խաչատրյանին պատկանող, չօգտագործվող ջերմոցի պատը՝ 15 մ երկարությամբ:

Դեպքի մասին տեղեկացվել են մարզպետարանի աշխատակիցները:

Կարկտահարություն

Մայիսի 5-ին, ժամը 19.00-19.30-ի սահմաններում տեղացած կարկտի հետևանքով Արագածոտնի մարզի Նոր Ամանոս, Նոր Եղեխա, Արագածոտն, Շամիրամ, Արուն, Դպրեվանք, Կոչ գյուղերում վնասվել են գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածքները:

Կարկտահարված տարածքները «ՄեՎԱՆԾ» ՊՈԱԿ-ի կողմից չեն վերահսկվում:

• Արմավիրի մարզից տեղեկություն է ստացվել, որ մայիսի 5-ի երեկոյան տեղացած կարկտի հետևանքով վնասվել են մարզի Նալբանդյան, Շենավան, Արմավիր, Ամասիա, Բամբակաշատ, Քարակերտ, Արգաշատ, Սարդարապատ, Խանջյան, Ալաշկերտ, Լուկաշին, Լենուղի, Արզնի, Դալարիկ, Բաղրամյան, Նորավան, Զահիկ, Գետաշեն գյուղերի եւ Արմավիր քաղաքի հարավ-արեւմտյան հատվածի գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածքները, ինչպես նաեւ պտղատու ծառեր:

Կարկտահարված տարածքները՝ բացառությամբ Նալբանդյան, Շենավան, Գետաշեն եւ Քարակերտ գյուղերի, «ՄեՎԱՆԾ» ՊՈԱԿ-ի կողմից չեն վերահսկվում:

Գործել են Արգավանդ, Փշատավան, Ջանֆիդա, Նալբանդյան, Նոր Կեսարիա, Բերքաշատ, Շենավան եւ Գետաշեն գյուղերում տեղակայված հակակարկտային կայանները:

Վնասներ՝ քամուց

Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ մայիսի 5-ին, ժամը 16.00-ի սահմաններում գրանցված ուժեղ քամու հետևանքով վնասվել են Լոռու մարզի Դեբեդի գյուղապետարանի, դպրոցի, 12 բնակելի տների եւ շինությունների ապակիներ՝

10 քմ մակերեսով, տանիքների 41 թիթեղ եւ 55 կղմինդր, տապալվել է 30 պտղատու ծառ:

Արգահոսք՝ կոմբինատից

Մայիսի 8-ին, ժամը 20.35-ին տեղեկություն է ստացվել, որ «Ջանգեզուրի պղնձանոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի պղատարի թունելի (Շղարշիկ բանավանի հատված) խցանման պատճառով տեղի է ունեցել արտադրական թափուկի արտահոսք, որը հնարավոր է առաջացնի նյութական վնաս:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարական վարչության օպերատիվ խումբը:

Պարզվել է, որ խցանումը տեղի է ունեցել մայիսի 7-ին, ժամը 21.00-ի սահմաններում: Խցանման հետևանքով արտադրական թափուկը հոսել է նախատեսված վթարային հորը: «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի վթարային բրիգադի կողմից արտահոսքը դադարեցվել է:

Վթարի հետևանքով բնապահպանական եւ նյութական վնաս չի գրանցվել:

Փլուզում՝ Բջնիում

Մայիսի 10-ին, ժամը 13.47-ին տեղեկություն է ստացվել, որ Կոտայքի մարզի Բջնի գյուղում տեղի է ունեցել տղանք եւ փլուզում:

Դեպքի վայր են մեկնել մարզային փրկարական վարչության աշխատակիցները:

Տեղում պարզվել է, որ Օ. Խաչատրյանին պատկանող տան բակում առաջացել են հողի փլվածք՝ մոտ 20 քմ մակերեսով եւ 1-3 մ երկարությամբ ճեղքվածքներ: Դարպասի երկաթ-բետոնե տարրերը (1,5-2 մ) գտնվում են օդում, իսկ մնացած մասն առանձնացել է կից կառուցված անասնագոմի պատից:

Անցանելի է բակի 1-1,2 մ երկարությամբ հատված, որտեղ եւս առկա է փլուզման վտանգ:

Մնացել է պանելի փակ

Մայիսի 10-ին, ժամը 13.52-ին տեղեկություն է ստացվել, որ փլուզվել է Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Տեր-Գաբրիելյան փողոցում 1970-ական թթ. կառուցված կեղտաջրերի մաքրման մասին կայանի շենքը, կա >>>

տումները Վենեսուելայում սկսվել են 2010 թվականից, երբ երաշտի հետևանքով նվազել է «Գուրի» ԴԵԿ-ի հզորությունը: Այն ապահովում է երկրի էլեկտրաէներգիայի 70 տոկոսը:

Հռոմի բնակիչները խուճապահար լքել են քաղաքը

Մայիսի 9-ին Հռոմի քաղաքացիների շրջանում խուճապ էր առաջացրել կամխատեսումն այն մասին, որ մայիսի 11-ին ուժեղ երկրաշարժ է սպասվում: Իտալիայի մայրաքաղաքը դատարկվել էր: Հռոմի փողոցներն «անսովոր խաղաղ էին», թեւ տուրիստական շրջանն արդեն սկսվել է: Երկրաշարժի մասին կամխատեսումն արել էր կյանքից հեռացած սեյսմոլոգ Ռաֆայել Բենդանդին: Նա էր ասել, որ երկրաշարժը լինելու է անսովոր ուժեղ: Տեղի մասնագետների խոսքով՝ խուճապի ոչ մի պատճառ չկա: Այդ խոսքերը, սակայն, չեն ազդել Հռոմի անհաճուտացած հասարակության վրա:

Բենդանդին կյանքից հեռացել է 1979 թվականին, 86 տարեկան հասակում: Նա հայտնի է դարձել շնորհիվ իր կամխատեսումների. նա կամխատեսել էր 1923 թ. Ադրիատիկում տեղի ունեցած երկրաշարժը, թեւ սխալվել էր երկու օրով: 1927 թվականին Մուսոլինին նրան շնորհել էր ասպետական տիտղոս:

Երկրաշարժի կանխատեսումը, սակայն, ամենայն հավանականությամբ, հորինվածք է: Բենդանդինի ժառանգության հետազոտողները վկայում են, որ նրա գործերում չկա 2011 թվականի մայիսի 11 հիշատակումը:

Փոթորիկ Ֆիլիպիններում



Ֆիլիպիններում արեւադարձային փոթորկի հետևանքով առաջացած հեղեղումներից եւ փլուզումներից զոհվել է առնվազն երեք մարդ, ավելի քան հարյուր հազարը լքել են տները:

Փոթորիկն ուղեկցվել է 85 կմ/ժ արագությամբ ուժգին քամով: Մի շարք քաղաքներում խափանվել է էլեկտրասնուցումը:

Իրականացվում են վերականգնողական աշխատանքներ:

Ֆաինա Թյունիբայան

արագ արձագանքման ծառայություններ



>>> տուժած եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Դեռեւս չպարզված հանգամանքներում մաքրման կայանի շենքի երկաթ-բետոնե պանելը (35 սմ հաստությամբ) շրջվել է Վարդենիսի բնակիչ, 1987 թ. ծնված Սասուն էլյանի վրա, որը տեղում մահացել է:

Հրշեջ-փրկարարների եւ տեղի բնակիչների ուժերով դին դուրս է բերվել փլատակներից ու հանձնվել ոստիկանության աշխատակիցներին:

Ներվել է ձորը

Մայիսի 10-ին, ժամը 14.02-ին տեղեկություն է ստացվել, որ Կիւելյան կամրջից մարդ է նետվել եւ կիրճից դին դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Փրկարարները կիրճից դուրս են բերել 1955 թ. ծնված Սամվել Մելիքջանյանի դին եւ հանձնել շտապօգնության ու ոստիկանության աշխատակիցներին:

Ավտոմեքենան բախվել է ծառին

Մայիսի 9-ին, ժամը 06.34-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Մյասնիկյան պողոտայում տեղի է ունեցել ավտոպատահար, կան տուժածներ եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ

փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Դեռեւս չպարզված հանգամանքներում «Նիսան» մակնիշի 20 SU 663 պետհամարանիշով ավտոմեքենան բախվել էր ծառին:

Մինչ փրկարարների դեպքի վայր հասնելը տեղի ուժերով ավտոմեքենայից դուրս են բերվել երկու քաղաքացի: Տուժածները՝ 1985 թ. ծնված Աշոտ Մաթեոսյանը, 1985 թ. ծնված Անահիտ Բաղդասարյանը եւ 1982 թ. ծնված Թամարա Աբաջյանը տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Ըստ բժիշկների՝ Ա. Բաղդասարյանի առողջական վիճակը ծանր է, իսկ Ա. Մաթեոսյանի եւ Թ. Աբաջյանի վիճակը՝ միջին ծանրությամբ:

Մեքենան բախվել է պատին

Մայիսի 9-ին, ժամը 09.24-ին ահազանգ է ստացվել, որ Արարատի մարզի Խաչիառ գյուղում տեղի է ունեցել ավտոպատահար, կա մեկ զոհ եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Դեռեւս չպարզված հանգամանքներում Արթուր Սիմոնյանին պատկանող «ՎԱԶ-2107» մակնիշի 16 ՍՍ 588 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթուղուց եւ մասից ու բախվել պատին, ինչի հետեւանքով 1981 թ. ծնված Ա. Սիմոնյանը տեղում մահացել է:

Փրկարարները վարորդի դին դուրս են բերել ավտոմեքենայից ու հանձնել շտապօգնության բրիգադին:

Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 22 դեպք:

Այրվել է խորդանոց

Մայիսի 7-ին, ժամը 18.19-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 18.20-ին, մարվել՝ 19.17-ին:

Այրվել է Ս. Խաչատրյանին պատկանող խորդանոցը՝ 24 քմ մակերեսով:

Հրդեհ արտադրամասում

Մայիսի 10-ին, ժամը 19.16-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Կոտայքի մարզի Մայակովսկի գյուղում՝ «Սինա լեռ» ՍՊԸ-ի բետոնե սալիկների արտադրամասում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 20.33-ին, մարվել՝ 21.14-ին:

Այրվել են Ս. Գրիգորյանին պատկանող ՍՊԸ-ի տանիքի փայտյա կառուցատարրերը եւ թիթեղները՝ 340 քմ ընդհանուր մակերեսով, արտադրամասի ներսում՝ պլաստմասսե կաղապարներ:

սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. մայիսի 5-ից 11-ը ՍՊԱԾ-ի դիտացանցը Հայաստանի Հանրապետության տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժի գրանցել:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել տասը երկրաշարժ: Մայիսի 7-ին Թուրքիայում, Վան քաղաքից 45 կմ հարավ-արեւելք, գրանցվել է 4 բալ ուժգնությամբ սեյսմիկ իրադարձություն, իսկ հաջորդ օրը 3-4 բալ ուժգնությամբ՝ Վանից 61 կմ հյուսիս-արեւելք: 4 բալանոց երկրաշարժեր են տեղի ունեցել մայիսի 7-ին՝ Իրանի Խոյ քաղաքից 32 կմ հարավ-արեւելք եւ 10-ին՝ Ադրբեջանի Ջաքատալա քաղաքից 17 կմ հյուսիս-արեւմուտք: Մայիսի 9-ին 3 բալանոց երկրաշարժի էպիկենտրոնը գտնվում էր Հայաստան-Վրաստան սահմանային գոտում՝ Բավրա գյուղից 2 կմ հյուսիս-արեւելք: Սյո օրը նույն ուժգնությամբ երկրաշարժ է գրանցվել նաեւ Վրաստանի Դմա-նիսի քաղաքից 24 կմ արեւմուտք: Մայիսի 10-ին Հայաստան-Վրաս-

տան սահմանային գոտում՝ Աշոցք գյուղից 12 կմ հյուսիս-արեւմուտք, տեղի է ունեցել 3-4 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Նույն օրը Թուրքիայի Բուլանիկ քաղաքից 43 կմ հարավ-արեւելք գտնվող էպիկենտրոնով երկրաշարժի ուժգնությունը կազմել է 4-5 բալ, որին մայիսի 6-ին եւ 8-ին նախորդել էր 3 եւ 3-4 բալ ուժգնությամբ երկու ստորգետնյա ցնցում:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է երեք ուժեղ երկրաշարժ, որոնք տեղի են ունեցել խաղաղօվկիանոսյան օղակաձեւ գոտում (հրե օղակ): Սյուս երկու երկրաշարժերի էպիկենտրոնները գտնվում են Ավստրալիայի հարավային տարածքում՝ 6.3 եւ 6.8 մագնիտուդներով: 5.0-ից մինչեւ 6.0 մագնիտուդով 15 հետցնցում է գրանցվել Լուսայոտե կղզիների հատվածում: Երկրաշարժերի հետեւանքով զոհեր եւ ավերածություններ չկան:

ԱԻՆ ՍՊԱԾ գործակալություն

եղանակի տեսություն

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում. մայիսի 13-ից 15-ը շրջանների զգալի մասում սպասվում է անձրեւ եւ ամպրոպ: 16-ի եւ 17-ի գիշերը եւ օրվա երկրորդ կեսին սպասվում է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ, առանձին վայրերում՝ կարկուտ: Քամին՝ հարավ-արեւմտյան 4-9 մ/վրկ, ամպրոպի ժամանակ քամու ուժգնացում 18-23 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 13-ին եւ 14-ին կնվազի 4-6, 16-ին եւ 17-ին կբարձրանա 2-4 աստիճանով:

Օդի ջերմաստիճանը մայիսի 13-ի գիշերը կտատանվի լեռնային շրջաններում՝ +2... +7, Տավուշում՝ +8... +13, Լոռիում՝ +4... +9, Արագածոտնի նախալեռներում՝ +8... +13, Արարատյան դաշտում՝ +10... +13, Սյունիքի հովիտներում՝ +11... +16, Սյունիքի նախալեռներում՝ +8... +12, Արցախում՝ +10... +13 աստիճա-

նի սահմաններում:

Օդի ջերմաստիճանը մայիսի 13-ի ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ +11... +16, Տավուշում՝ +14... +19, Լոռիում՝ +13... +18, Արագածոտնի նախալեռներում՝ +17... +22, Արարատյան դաշտում՝ +18... +23, Սյունիքի հովիտներում՝ +18... +23, Սյունիքի նախալեռներում՝ +16... +20, Արցախում՝ +15... +18 աստիճանի սահմաններում:

Երեւանում. մայիսի 13-ից 15-ը սպասվում է անձրեւ եւ ամպրոպ: 16-ին եւ 17-ին գիշերը եւ օրվա երկրորդ կեսին սպասվում է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ, 14-ից 16-ը՝ հարավարեւելքի կարկուտ: Ամպրոպի ժամանակ սպասվում է քամու ուժգնացում 15-20 մ/վրկ:

Օդի ջերմաստիճանը մայիսի 13-ի գիշերը կտատանվի +10... +12, ցերեկը՝ +20... +22 աստիճանի սահմաններում:



ՌՈՍԳՈՍԱՏՐԱՆ ԱՐՄԵՆԻԱ

«Էլիտ գրուպ». կյանքի նոր որակ



Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպ» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպ» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ» բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Գիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպ» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:





Իսկական փրկարարի նման

Մեկ տարում՝ 2000 ավտովթար



**Մայիսի 3-ին Հրազդանի կի-
ծում 19-ամյա Անահիտ Հա-
րությունյանն ավտոմեքենա-
յով ընկել էր գետը: Մեքենան
շրջվել էր: Գետը շատ վարա-
րած էր, ջուրը սկսել էր լցվել
մեքենայի սրահ: Տուժածը չէր
կարողացել ինքնուրույն
դուրս գալ:**

Արվյանցի 22-ամյա Ռաֆիկ
Մակարյանը եղբոր հետ այդ
պահին մոտակայքում էր:

- Մենք չտեսանք՝ ինչպես
մեքենան շուռ եկավ, - պատ-
մում է Ռաֆիկը, - միայն ուժեղ
ծայն լսեցինք: Եղբայրս ասաց՝
էն մեքենան, որ նոր մոտոնորմ
անցավ, ոնց որ թե ջուրն ըն-
կավ: Վազեցիցն աղտեղ: Ես
միանգամից ջուրը նետվեցի:
Վարորդը վախեցած էր, չէր կա-
րողանում դուրս գալ, ապակին
էր թակում: Դիմացի դուռը բա-
ցել չհաջողվեց, բայց հետևի
դռնից կարողացա դուրս հանել
մրան:

Անահիտյան մեքենայից դուրս
հանելուց հետո Ռաֆիկը զան-
գահարել էր շտապօգնություն,
իսկ հետո փորձել էր ինքնուրույն

առաջին օգնություն ցույց տալ:

- Իրա շորերով ձեռքերը կա-
պեցի, վնասվածքներ ուներ:
Քույրս բուժքույր է, սովորեցրել
է՝ ինչպես է պետք առաջին օգ-
նություն ցուցաբերել:

Ռաֆիկը պատմում է, որ
տուժածին գետից հանելուց հե-
տո ինքն ու եղբայրը փորձել են
մեքենա կանգնեցնել, բայց բո-
լորն անտարբեր քշել-զնացել
են:

- Երեւի շտապում էին մար-
դիկ, ուրիշին փրկելու համար
ժամանակ չուներին:

Ակամա փրկարար դարձած
Ռաֆիկը հիշում է, որ ջուրը
նետվելիս միայն մտածել է տու-
ժածին շուտ դուրս բերելու մա-
սին, իսկ որ այդպիսով իր
կյանքն է վտանգում՝ մտքով չի
անցել անգամ, հասկացել է, որ
եթե մի քիչ հապաղի, վարորդը
կարող է խեղդվել: Լողալ,
ասում է, լավ գիտի, ինքնուրույն
է սովորել, բայց գետն այդ օրը
շատ վարար էր ու կատաղած,
այնպես որ, նույնիսկ իրեն՝
փորձառու լողորդին կարող էր
քշել-տանել:

Ռաֆիկը մարզիկ է՝ չինա-

կան բոքսով է զբաղվում: Երբ
վթարից հետո դեպքի վայր
եկան Արտակարգ իրավիճակ-
ների նախարարության ուժեր,
Հատուկ փրկարարական ջոկա-
տի հրամանատար Ավետիս Մա-
նուկյանը, իմանալով, որ երի-
տասարդը գործազուրկ է,
հարցրեց՝ արդյո՞ք չի ուզում
փորձել փրկարար դառնալ: Հա-
ջորդ օրը Ռաֆիկը զանգեց ԱԻՆ
Հատուկ փրկարարական ջո-
կատ. մարդ փրկելը նրան շատ
էր դուր եկել՝ որոշել էր փրկա-
րար դառնալ:

- Եթե մարդը կարողանում է
առանց երկմտելու իր կյանքը
վտանգել ու փրկել ուրիշին, դա
արդեն շատ բան է ասում նրա
մասին, - ասում է ԱԻՆ ՀԾՁ
հրամանատար Ավետիս Մա-
նուկյանը, - չէ՞ որ, նա փրկա-
րար չէր, նրա վրա պարտակա-
նություն չկար՝ փրկել ամեն
զնով: Շատ դեպքեր են լինում,
երբ մարդիկ չեն մոտենում տու-
ժածին, նույնիսկ եթե իրենց
կանքին վտանգ չի էլ սպառ-
նում, ուղղակի նայում են հեռ-
վից, կամ էլ կանգ չեն առնում,
մտածում են, որ իրենց գործը
չէ:

Մենք Ռաֆիկի հետ այցելե-
ցինք Հատուկ փրկարարական
ջոկատ: Հրամանատար Ավե-
տիս Մանուկյանն ուսումնասի-
րեց նրա փաստաթղթերը,
պատմեց փրկարարի մասնա-
գիտության մասին, մշեց բոլոր
բարդություններն ու պարտա-
վորությունները:

Ռաֆիկը պետք է երեքամսյա
դասընթաց անցնի ջոկատում,
որից հետո, եթե միտքը չփոխ-
վի, քննություն կհանձնի, ու
հանձնաժողովը կորոշի՝ երի-
տասարդը փրկարար դառնու՞մ
է, թե ոչ:

Անի Ստեփանյան

**Մայիսի 11-ից ամբողջ աշ-
խարհում, այդ թվում նաեւ
Հայաստանում մեկնարկեց
ՄԱԿ-ի կողմից հռչակված
Ճանապարհային անվտան-
գության «Գործողություննե-
րի տասնամյակը»: Հայաս-
տանում կկազմակերպվի մի-
ջոցառումների շարք՝ նվիր-
ված «Գործողությունների
տասնամյակի» մեկնարկին:**

Մայիսի 11-ին, ժամը 12.30
Հանրապետության հրապարա-
կում՝ Արվյան փողոցի սկզբ-
նամասում բացօթյա ասուլի-
սով հանդես են եկել ՀՀ ճանա-
պարհային երթևեկության
անվտանգության ազգային
խորհրդի, ՄԱԿ-ի հայաստան-
յան ներկայացուցչության,
ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի
եւ ՀՀ ճանապարհային ոստի-

գազանց հետիոտնին ուղղված:
Հայաստանում մեկ տարում
ավտովթարների թիվը հասնում
է 2000-ի, որոնց հետեւանքով
մահանում է մոտ 300 մարդ:

Յուրաքանչյուր տարի ճա-
նապարհային պատահարների
հետեւանքով աշխարհում մա-
հանում է 1,3 մլն մարդ: Այդ թի-
վը հավասար է Երեւանի քաղա-
քի բնակչության թվին: Յուրա-
քանչյուր 3-րդ րոպեին զոհվում
է մեկ երեխա: Այս սարսափ
ներշնչող ցուցանիշներն ազ-
դակ են հանդիսացել միավորե-
լու ուժերը եւ միասին պայքա-
րելու վտանգի դեմ:

Առողջապահության համաշ-
խարհային կազմակերպության
փորձագետների դիտարկման
համաձայն, աշխարհում ճա-
նապարհային երթևեկության
պատկերը կարելի է համեմա-



կանության ներկայացուցիչնե-
րը, այնուհետեւ նույն տեղում
են Երեւանի այլ վայրերում
կազմակերպվելու են ակցիա-
ներ՝ ՀՀ ճանապարհային ոս-
տիկանության եւ դպրոցական-
ների մասնակցությամբ՝ կար-

տել համընդհանուր աղետի
հետ, եւ եթե անհրաժեշտ մի-
ջոցներ չձեռնարկվեն, ապա
մինչ 2020 թ. ավտովթարների
հետեւանքով մահն աշխար-
հում կդառնա մահացության
հիմնական պատճառը:

Գենդեր եւ աղետների ռիսկերի նվազեցում (ԱՌՆ)

**Սկիզբը նախորդ համարներում
(հսկված)**

**Գենդերային հավասարությունն
ինքնանպատակ չէ:
Այն աղքատության հաղթահար-
ման, կայուն զարգացման եւ
պատշաճ կառավարման
խնդիրները լուծելու
նախապայման է:**



Կառավարության
քաղաքականությունը
Աղետների Ռիսկե-
րի նվազեցման Ժա-
մանակ
Աղետները պետք է
դիտել որպես գործըն-
թացների փոփոխման
հնարավորություն,
որպես մի պլատֆորմ՝ օրինա-
կանացնելու եւ ստեղծելու հնա-
րավոր եւ անհրաժեշտ սոցիա-
լական, քաղաքական եւ տնտե-
սական փոփոխություններ՝
աղետների ռիսկերի եւ հա-
մայնքների խոցելիությունը
նվազեցնելու համար: Նոր իրա-

վիճակները եւ ռազմավարու-
թյունները պետք է կենտրոնա-
նան գենդերային-զգայուն
աղետների կառավարման ռազ-
մավարությունների վրա:

**Ազգային կառավարու-
թյունների, միջազգային զար-
գացման գործակալություն-
ների, տարածաշրջանային
կազմակերպությունների եւ
այլ շահագրգիռ անձանց
նպատակը պետք է լինի հե-
տեւյալը.**

1. Ավելացնել քաղաքական
պատասխանատվությունը եւ
ֆինանսական միջոցները ԱՌՆ
ժամանակ գենդերային ուղ-
ղորդման գործողությունների
գլոբալ պաշտպանության հա-
մար:

2. Ազգային մակարդակով
կատարելագործել գենդեր եւ
ԱՌՆ հասկացությունների իմաս-
տային եւ գործնական պատկե-
րացումները:

3. Ստեղծել ինստիտուցիո-
նալ եւ անհատական կարողու-
թյուններ եւ գործիքներ՝ ԱՌՆ
ներքո գենդերային ուղղորդման

համար:

4. Ծանաչել եւ մոբիլիզաց-
նել կանանց հմտությունները եւ
կարողությունները, պաշտպա-
նել վերջիններիս, իրենց ընտա-
նիքների եւ համայնքների անվ-
տանգությունը՝ որպես աղետ-
ների ռիսկերի նվազեցման հա-
մակարգի մի մաս:

Համաձայն միջազգային
օրենսդրական մեխանիզմների
եւ համաձայնագրերի՝ կառա-
վարությունները կարող են.

- Կատարել գենդերային
վերլուծություններ եւ գենդերա-
յին ուղղորդման գործընթացներ
աղետների ռիսկերի նվազեց-
ման, կլիմայի փոփոխություննե-
րի, աղքատության նվազեցման
եւ գենդերային հիմնախնդիրնե-
րով զբաղվող նախարարու-
թյունների հետ համագործակ-
ցության միջոցով:

- Վերանայել ազգային քա-
ղաքականությունները, ռազմա-
վարությունները, նախագծերը
եւ անհապաղ գործողություն-
ներ իրականացնել ազգային
զարգացման քաղաքականու-

թյունների եւ ծրագրերի մեջ
գենդերային ուղղորդման ուղ-
ղությամբ:

- Ազգային վտանգների
արագ արձագանքման համա-
կարգերի մեջ ապահովել կա-
նանց եւ տղամարդկանց հավա-
սար հնարավորությունները:

- Ստեղծել սեռի հիման վրա
ծեւավորված հատուկ տվյալներ
եւ կատարել վիճակագրություն
աղետների հետեւանքների,
գենդերային-զգայուն խոցելիու-
թյան, ռիսկերի եւ կարողու-
թյունների գնահատման վերա-
բերյալ եւ մշակել գենդերային-
զգայուն ցուցիչներ մոնիտորին-
գի համար:

- Ավելացնել հասարակու-
թյան եւ զանգվածային լրատ-
վական միջոցների տեղեկատ-
վության մակարդակը աղետնե-
րի ռիսկերի նվազեցման եւ կա-
ռավարման ժամանակ գենդե-
րային կարիքների եւ գենդերա-
յին-զգայուն խոցելիության եւ
կարողությունների վերաբեր-
յալ:

- Աջակցել գիտական հաս-
տատություններին կատարել
ուսումնասիրություններ աղետ-
ների ռիսկերի նվազեցման, կլի-

մայի փոփոխությունների հար-
մարվողականության եւ չքավո-
րության նվազեցման գործողու-
թյունների ժամանակ գենդերա-
յին-զգայուն քաղաքականու-
թյան եւ ծրագրերի արդյունա-
վետության ուղղությամբ:

- Ապահովել ԱՌՆ եւ կլիմայի
փոփոխությունների հարմարվո-
ղականության միջոց կապը գեն-
դերային հեռանկարների մեջ:

- Աջակցել գենդերային-զ-
գայուն ֆինանսական ռիսկերի
գնահատման մեխանիզմներին,
ներառյալ ռիսկերի ապահո-
վագրումը եւ վերաապահովագ-
րումը:

- Կատարելագործել աղետ-
ների ռիսկերի նվազեցման
պատասխանատվությունը եւ արձա-
գանքումը եւ դրանք հասանելի
դարձնել կանանց եւ տղամարդ-
կանց կարիքների եւ պահանջ-
ների համաձայն:

- Ավելացնել կանանց մաս-
նակցությունը աղետների կան-
խարգելման գործողություննե-
րի մեջ եւ ստեղծել հավասար
պայմաններ կանանց եւ տղա-
մարդկանց համար:

- Վերակառու-
ցումը պահանջում է >>>



Էլեկտրահաղորդազծերի հրդեհավտանգավորությունը վթարային ռեժիմների ժամանակ

Հրդեհների առաջացման հիմնական պատճառներից մեկը էլեկտրասարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումն է: Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ այսօր չկա հրդեհների առաջացման առավել վտանգավոր տեխնիկական պատճառ, քան էլեկտրասարքավորումների վթարային ռեժիմները եւ, մասնավորապես, կարծ միացումը, էլեկտրացանցի ծանրաբեռնվածությունը, անցումային դիմադրությունները, փոփոխական լարվածությունների և կայծերի առաջացումը: Էլեկտրասարքավորումներից առավել հրդեհավտանգ են էլեկտրահաղորդազծերը եւ զանազան էլեկտրական սարքերը:

Բավական է նշել, որ միայն այս տարվա առաջին չորս ամիսների ընթացքում հանրապետությունում արձանագրվել է մեծածախ հրդեհների 80-ից ավելի դեպք, զոհվել է 2 եւ վնասվածքներ ստացել 3 մարդ, իսկ նյութական վնասի գումարը գերազանցել է 40 միլիոն դրամը:

Բերենք օրինակներ. 2011 թվականի փետրվարի 2-ին Երեւան քաղաքի Վարդանանց փողոցի 5ա շենքի 44 բնակարանի բնակիչ Սեդա Թամրազյանը միացրել է էլեկտրական ջեռուցիչ սարքավորումը եւ տեղադրել տնային իրերից ու գույքից անթույլատրելի հեռավորության վրա: Որոշ ժամանակ անց նա գնացել է քնելու՝ մոռանալով անջատել ջեռուցիչը, որի ջերմային ազդեցության հետեւանքով հրդեհ է բռնկվել: Հասարակական տեղում գտնվող էլեկտրական սարքերի անվտանգ գործողությունը կախված է մեկուսացնելու և մարելու հրդեհը, սակայն անփութ տանտիրուհին ստացած այրվածքներից զոհվել է:

Ապրիլի 5-ին հրդեհ է բռնկվել Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի բնակիչ Ա. Մելքոնյանին պատկանող խանութում: Հետաքննությանը պարզվել է, որ խանութի էլեկտրատնտեսությունը մոնտաժված է մի շարք խախտումներով, ինչի հետեւանքով օդորակիչում տեղի ունեցած կարծ միացումից բոցավառվել է պլաստմասե երեսպատվածքը եւ շիկացած մասնիկները թափվել են գետնին կուտակված տարատեսակ ապրանքների վրա: Առաջացած հրդեհի արդյունքում այրվել կամ ծխից փչացել են խանութում գտնվող բոլոր ապրանքներն ու սարքավորումները՝ տիրոջը պատճառելով շուրջ 5.7 միլիոն դրամի նյութական վնաս:

Վիճակագրական տվյալների համաձայն հրդեհների առաջացման էլեկտրատեխնիկական պատճառներից կարծ միացումը (միակցումը) վտանգավոր է զբաղեցնում է առաջին տեղը (շուրջ 68%): Կարծ միացումն այն երեսույթն է, երբ լարման տակ գտնվող տարանուն հաղորդալարերը միանում են մեկը մյուսին հետ՝ չափազանց փոքր դիմադրության միջոցով: Այն հիմնականում տեղի է ունենում հաղորդալարերի եւ էլեկտրասարքավորումների հոսանքատար մասերի մեկուսիչ շերտի՝ տարբեր պատճառներից առաջացած վնասվածքների հետեւանքով, երբ հոսանքը սպառիչին չհասած, առանց որել դիմադրության հանդիպելու մի հաղորդալարից անցնում է մյուսին: Գործնականում ապացուցված է, որ կարծ միացման ժամանակ ցանցի դիմադրությունը միանգամից փոքրանում է, հաճախ հավասարվում գրոյի, որի ժամանակ հոսանքի ուժը մեծանում, հասնում է հազարավոր ամպերների: Հոսանքի ուժի մեծացման հետ մի քանի անգամ ավելանում է ջերմությունը, ինչի հետեւանքով բռնկվում

են հաղորդալարերի վրայի մեկուսիչները՝ առաջացնելով հրդեհ:

Կարծ միացման ժամանակ էլեկտրական շղթայի ընդհանուր դիմադրությունը կտրուկ փոքրանում է, ինչը հանգեցնում է նրանում հոսանքի զգալի ավելացման (համեմատած նորմատիվ ռեժիմների հոսանքների հետ): Որպես կանոն, կարծ միացման տեղում առաջանում են որոշ անցումային դիմադրություններ, որոնք երբեմն

դեպքում հնարավոր են հետեւյալ դեպքերը՝

1. Մետաղական կառուցատարրերը (որոնց վրա տեղի է ունեցել կարծ միացում) ունեն շատ փոքր դիմադրություն, հողի հետ եւ միմյանց հետ միացումների լավ կոնտակտ (շփում): Այդպիսի պայմաններում միաֆազ միացումները հողի հետ՝ այդ կառուցատարրերի միջոցով, ուղեկցվում են զգալի հոսանքների առա-



այնքան փոքր են, որ կարելի է դրանք անտեսել: Այդպիսի կարծ միացումն անվանում են մետաղական կամ լրիվ, իսկ այլ հավասար պայմանների դեպքում մետաղական կարծ միացման ժամանակ հոսանքն ավելին է, քան անցումային դիմադրությունների ժամանակ: Հատկապես վտանգավոր է մի ֆազի միացումը տարբեր մետաղական կառուցատարրերի հետ (տանիքածածկ, ջրահոսքի խողովակներ, կարկասներ (կմախք), տարբեր խողովակաշարեր, ծեփասվաղի տակի մետաղական ցանցեր, մետաղական հեծաններ եւ այլն), որոնք հողի (գետնի) հետ միացած են: Այս

ջացմամբ, ինչն էլ մեծ մասամբ բերում է դյուրահալ ապահովիչների այրմանը (կամ այլ պաշտպանիչ սարքերի գործարկմանը (միացմանը)) եւ հետեւաբար պաշտպանվող տեղամասի անջատմանը: Տվյալ դեպքում վտանգը սահմանափակվում է կարծ միացման տեղամասով, որտեղ հնարավոր է զգալի կայծարձակում եւ էլեկտրական աղեղի կարծաժամկետ առաջացում:

2. Մետաղական կառուցատարրերը (որոնց վրա տեղի է ունեցել կարծ միացում) ունեն զգալի դիմադրություն, իսկ կարծ միացման տեղից մինչեւ հողը հոսանքի ճանապարհին հանդիպում

են ոչ կիպ հպակներով (կոնտակտներով) տեղամասեր: Առավել հաճախ այդպիսի պայմաններ հանդիպում են ֆազերից մեկի՝ մետաղական տանիքածածկերի, ջրահոսքի խողովակների, կարկասների, տարբեր խողովակաշարերի, ծեփասվաղի տակի մետաղական ցանցերի, մետաղական հեծանների եւ այլն, միացման հետեւանքով: Այս դեպքում շատ մեծ է հողի վրա միաֆազ միակցման վտանգը: Միակցման տեղի եւ հողի միջեւ եղած միջանկյալ դիմադրությունները կարող են այնքան սահմանափակել միակցման հոսանքը, որ պաշտպանիչ սարքերը չեն աշխատի (գործարկվի): Հոսանքի՝ դեպի հողը անցման ճանապարհին, ոչ կիպ հպակներով տեղամասերը խիստ կտաքանան եւ այրման ընդունակ կառուցատարրերի կամ առարկաների հետ շփվելիս կարող են առաջացնել բռնկում: Տաքացումը կարող է լինել այնքան ուժեղ, որ մետաղական կառուցատարրերի առանձին տեղամասեր կարող են հալվել:

Էլեկտրական ցանցի ծանրաբեռնվածությունն այն երեսույթն է, երբ հաղորդալարերի կտրվածքով անցնում է նախատեսվածից ավելի շատ էլեկտրական հոսանք: Դա հիմնականում տեղի է ունենում այն ժամանակ, երբ էլեկտրական ցանցին միացվում են նորմայից շատ էլեկտրական սպառիչներ: Այդ դեպքում զգալիորեն մեծանում է հոսանքի ուժը, որի աճին զուգընթաց ավելանում է նաեւ անջատվող ջերմությունը, ինչի արդյունքում բռնկվում է հաղորդալարի մեկուսիչ շերտը եւ հրդեհ է առաջանում:

Շարունակելի

**Սերգեյ Հայրապետյան
ՀՀ ԱԻՆ ՊՅՏ ՀՀՎՀԲ
բաժնի պետ**

>>> բյուջեի տրամադրում գեներալային զգալուն սոցիալական հիմնախնդիրների եւ գործողությունների իրականացման համար՝ տնտեսապես տուժած գոտիների վերականգնման համար: Այն ներառում է ժամանակավոր աշխատանքային ծրագրեր, տների վերակառուցում եւ անհարժեշտ ենթակառուցվածքների կառուցումը կարողությունները՝ գեներալային ուղղորդումը զարգացման բոլոր համակարգերում ընդգրկելու համար:

Ավելացնել համայնքների եւ համապատասխան ազգային ինստիտուտների կարողությունները՝ գեներալային ուղղորդումը զարգացման բոլոր համակարգերում ընդգրկելու համար:

Աղետների կառավարման ժամանակ գեներալային հիմնախնդիրների արդյունավետ կառավարման նախադրյալները.

• Իրականացվող բոլոր ծրագրերում պետք է լինի գեներալային զգալուն

դերային զգալունության եւ գեներալային վերլուծությունների վերաբերյալ ուսուցում: Այն նպատակ ունի բարձրացնել գեներալային զգալունությունը: Այն կօգնի գեներալային զգալուն աշխատանքային պլանների կազմմանը:

• Հատուկ ջանքեր են պահանջվում աղետների կառավարման հետազոտողներից, պլանավորողներից եւ քաղաքականություն մշակողներից, որպեսզի նրանք ստեղծեն սեռի հիման վրա ձեւավորված տվյալների բազա, որը հիմք կծառայի տեղեկատվության հավաքագրման եւ վերլուծման համար, աղետների ռիսկերի կառավարման ծրագրերի նախագծման, մոնիտորինգի եւ գնահատման համար:

• Իրականացնել գեներալային կանանց հզորացմանը նպաստող աղետների ռիսկերի կառավարման գործողություններ՝ ռազմավարական եղանակով եւ բոլոր ծրագրային նախագծերի միջոցով:

Գեներալային-զգալուն ռիսկերի գնահատում

Գեներալային ռիսկը ամենօրյա կյանքի մասն է կազմում: Աղետների ռիսկի գիտակցումը կարելի է նախապայման է հան-



դիսանում աղետների ռիսկերի կառավարման եւ նվազեցման համար:

Ցանկացած ռիսկի նվազեցման համակարգի հիմնական գործոնը հանդիսանում է ռիսկերի գնահատումը, ինչպես նշ-

վում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ռազմավարության մեջ «Ռիսկի գնահատումը աղետների ռիսկերի նվազեցման քաղաքականու-

հնարավոր վտանգը եւ գնահատում է խոցելիության աստիճանը, որը կարող է սպառնալ մարդկանց եւ բնությանը: Այդ գնահատումները ներառում են ռիսկերի սոցիալական, տնտեսական, ֆիզիկական եւ բնապահպանական գործոնները եւ հանգամանքները:

Ռիսկերի գնահատման ժամանակ պետք է հաշվի առնել կանանց եւ տղամարդկանց կարիքները, դերերը եւ պատրաստվածության աստիճանը, քանի որ ԱՌ կառավարման նպատակն է՝ ապահովել անվտանգություն հասարակության բոլոր ներկայացուցիչների համար:

Մինչեւ գեներալային ընդունված չլինի որպես ամենակարեւոր գործոններից մեկը (այն ազդում է մարդկանց գրեթե բոլոր բնագավառներում կուտակված փորձի վրա, եւ չի ընդունվում որպես ուսումնասիրման եւ հատուկ տեսակետի առարկա) մասնագետները կշարունակեն ներկայացնել իրենց պատմության միայն մի մասը՝ անկախ նրանից, թե ինչ պատմություն է ներկայացված:



«Լեզվի փակ փուշ չունեն»

Մենք մեր կյանքում բազմիցս հանդիպում ենք մարդկանց, որոնց կարելի է բնորոշել որպես անսիրտ, անտակտ, անշնորհք, «լեզվի տակ փուշ չունեցող» եւ նման այլ բառերով: Նրանք ասում են այն, ինչ տվյալ պահին անցնում է իրենց մտքով՝ առանց մտածելու, որ այդ խոսքերով միգուցե վիրավորում են դիմացինին: Կարծես նրանք դիտմամբ են ակնհայտ դարձնում իրենց մտերիմների թույլ եւ ցավոտ կողմերը: Նրանք՝ անկախ իրենց կամքից, կարող են վիրավորել նույնիսկ ամենաթանկ մարդկանց: Որոշ ժամանակ անց սկսում են իրենց մեղադրել եւ ամաչել արածի համար, սակայն ոչինչ չեն կարողանում անել իրենց հետ, չեն կարողանում վերահսկել իրենց սուր եւ վտանգավոր լեզուն:

Դադապարզված եւ անփակ փուշ

Անտակտ լինելը, սեւ հումորներ անելը, դիմացինի թերությունները ծաղրումնալի եմբարկելը ձեռնարկվում է երեխայի մեջ դեռեւս մանկության տարիներին: Երբ ծնողները երեխայի փոքրիկ թերությունները, բացթողումները չափազանց քննադատում են կամ շատ մեղմացնում եւ անտե-

տում, ապա այդ մոտեցումը ձեւավորում է պատկերացում սեփական անձի նկատմամբ: Երեխան սկսում է ընկալել իրեն որպես «չարածճի» կամ «միամիտ» անձ: Մեծանում է այն զգացողությամբ, որ անտակտությունն իր էության մի մասն է, սակայն իրականում նրանք իրականացնում են իրենց ծնողների կողմից ծրագրավորված վարքային մոդելը: Այդ մոդելն իրականացնում են, հետո գիտակցում են իրենց արարքի հետեւանքներն ու սկսում մեղավոր զգալ, ամաչել:

Փորձենք հասկանալ այս ամենի պատճառները:

Ֆրոյդի մեկնաբանությունը

Սուր եւ սեւ հումորը, անտակտ արտահայտություններն, ըստ Ֆրոյդի, մեր թաքնված ցանկությունների, անգիտակցական մղումների եւ զգացմունքների արտահայտման ուղիներից մեկն է: Երբ մարդու ցանկությունները, մղումները ճնշվում են հասարակական շատ պահանջների պատճառով, հոգեկան աշխարհը դրանք փոխհատուցելու ճանապարհներ է փնտրում:

Չափազանց լարվածություն

Նման անտակտություն դիտվում է, երբ մարդկանց հույզերն ու միտքն անհամադաս են:

Նրանք անտակտ արտահայտություններ անում են այն ժամանակ, երբ ներքին լարվածությունն ու տագնապն են զգում: Նրանք այնքան են լարվում, որ հանկարծ ինչ-որ վատ արտահայտություն չանեն, ինչի հետեւանքով բառերն անկախ իրենց կամքից դուրս են թռչում:

ձեզ հնարավորություն կտա հանգստանալ եւ ճիշտ ուղղությամբ շարժվել:

2. Ընդունել ձեր պարտությունը

Ուշ է արդեն, դուք արել եք այն, ինչից ամենից շատ էիք խուսափում: Ձեզ այնպես մի՛ պահեք,



Ի՞նչ անել

1. Իրավիճակը նախօրոք դիտարկել

Դուք վախենում եք, որ անտակտ արտահայտություն կան ոչ տեղին խոսք կասեք: Մի՛ փորձեք իրավիճակը մոռանալ, ընդհակառակը՝ փորձեք իրավիճակին դրական ընթացք տալ: Դա

կարծես ոչինչ չի եղել: Ցույց տվեք ձեր գրուցակցին, որ դուք գիտակցում եք, որ անտակտ եք եղել, վիրավորել եք նրան: Բացատրեք, որ այդպես ստացվեց, որովհետեւ վախենում էիք հանկարծ ինչ-որ բան այնպես չանել: Հնարավոր է՝ ձեր անկեղծությունը մի փոքր թեթեւացնի վիրավորանքը:

3. Փորձեք կառավարել ձեզ

Փորձեք հանդարտեցնել ձեր միտքը, հույզերը եւ խոսքը: Դրան հասնելու համար ձեզ կօգնեն դերասանի վարպետության դասընթացները եւ հոգեդրաման: Շատ նպատակահարմար է նաեւ, որ դուք օրագիր պահեք: Այդպես դուք ավելի լավ կգիտակցեք ձեր հույզերը եւ դրանց տակ թաքնված պահանջները, եւ արդյունքում էլ դուք կկարողանաք ավելի վերահսկել ձեզ: Յոգան եւ շնչառական մարմնամարզությունը կօգնեն ձեզ հանել ձեր ներքին լարվածությունը:

Խորհուրդ այն մարդկանց, ովքեր «անտակտներն են» խոսքի գոհն են դառնում.

Երբ վիրավորված եք, չեք ուզում այլես ուրեւէ կապ ունենալ վիրավորողի հետ, համենայն դեպս՝ որոշ ժամանակ: Հնարավորություն տվեք, որ նա քափի իր մեղքը, բացատրի իր արածը եւ ընդունեք նրա ներողությունը: Որովհետեւ հաճախ նրանց հնարավորություն չեն տալիս ներողություն խնդրելու, քանի որ վիրավորանքը մեծ է լինում: Փորձեք միասին թեթեւացնել իրավիճակը եւ այն հումորով դիտարկել:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու
Ձեր հարցերը հոգեբանին կարող եք ուղարկել hogeban@emergency.am էլ. hwagut@

Ապագա-2050. մեքենաները կկարողանան խոսել փնտրել հետ

«Ապագա - 2050» գրքի հեղինակ Ուլրիխ Էբերլը հարցազրույց է տվել գերմանական թերթերից մեկին, որտեղ ներկայացրել է իր գրքից որոշ դրվագներ: Նա մասնագիտությամբ ֆիզիկոս է, Siemens ընկերությունում զբաղվում է հնվագիտության խնդիրներով:

Մասնավորապես, հեղինակը պնդում է, որ ոչ հեռու ապագայում ձեռքի ժամացույցներում միկրոչիպ տեղադրված կլինի, որը բժիշկ կկանչի, եթե ժամացույցի տեղը կորցնի գիտակցությունը, էլեկտրավոլտմոդուլները կկառավարվեն զգայարաններով, իսկ թերթերի փոխարեն մարդիկ կկարդան ծավալող էկրաններ:

- Այն, ինչ ես նկարագրում եմ գրքում, արդեն մշակվում է համալսարանների եւ արդյունաբերական լաբորատորիաներում, - ասում է Էբերլը, - ապագան հենց այնպես չի գալիս, այն ստեղծվում է:

Շատ նախագծեր հիմնվում են այսպես կոչված «ճանապարհային քարտեզի» վրա, շարունակում է հեղինակը:

- Մենք դիտարկում ենք այսօրվա օրը՝ զարգացնելով այդ հիմքի վրա ապագայի գաղափարները: Հաշվի են առնվում այնպիսի գործոններ, ինչպիսիք են հասարակությունը, առողջապահությունը, տնտեսությունը, բնապահպանությունը եւ այլն: Այդպես, մենք նպատակասլաց կերպով իրեր

ենք մշակում, որոնք պիտանի կլինեն ապագայում օգտագործելու համար:

Հեղինակի ներկայացմամբ լինված հնարավոր է, որ մի օր իրար հետ երկխոսեն էլեկտրաէներգիայի անշունչ սպառողները, օրինակ՝ տունն ու ավտոմեքենան:

- Որոշակի պահի ավելի շահավետ կարող է լինել մեքենայի ակունուլատորում կուտակված էժան էներգիան օգտագործելը՝ տան էլեկտրացանցը գործի դնել:



լու փոխարեն, - կարծում է նա, - բայց դրա համար ավտոմեքենան պետք է իմանա՝ արդյո՞ք իր տեղը եւս մի ճանփորդություն պլանավորում է այդ օրը, թե ոչ, եւ որքան էլեկտրաէներգիա կպահանջվի դրա համար: Այդ մասին մեքենան կարող է իմանալ տիրոջ էլեկտրոնային օրացույցից:

Գիտության ապագան տարբեր միտքերի համատեղման մեջ է՝ ապագայի գիտնականներն ու ինժեներներն ավելի բազմակող-

մանի եւ տարբերակված ուսուցում կանցնեն, ընդգծում է Էբերլը: Հեղինակը կարելի է տեղ է հատկացնում միկրոչիպերի կատարելագործմանը:

- Միկրոչիպի արտադրողականությունը 20 տարվա ընթացքում հազար անգամ ավելացել է, - ընդգծում է նա, - այսօրվա Լափթփի հզորությունը 20 տարուց մի ոլորի հատիկի չափ ծավալ կզբաղեցնի եւ շուկայի սակից քիչ կարծես: Համապատասխանաբար կընդլայնվի եւ կիրառման ոլորտը:

Եթե մենք այսօր ապրում ենք ինֆորմատիկայի ժամանակաշրջանում, ապա մյուսը, որը ծնվում է արդեն այսօր, այն շրջանն է, որի կենտրոնում կլինի առողջությունը, ինչպես շրջակա միջավայրի, այնպես էլ՝ մարդու:

- Վրա է հասնում էկո-տեխնիկայի բունը, - կանխատեսում է Էբերլը, - միաժամանակ մարդկությունն ավելի ծեր է դառնում: 2050 թվականին Գերմանիայի յուրաքանչյուր երրորդ բնակիչ կդառնա 65 տարեկան, իսկ ամեն յոթերորդը կապրի մինչեւ 80 տարեկանը: Նոր լուծումներ կպահանջվեն, որ մարդը, որքան հնարավոր է, երկար առողջ մնա:

2050 թվականին Երկրի վրա 9 մլրդ մարդ կապրի, եզրափակելով ընդգծում է հեղինակը: Այդ պատճառով էլ աճում է թափոնները բացառող փակ շրջանների դերը՝ կյանքի տարբեր ոլորտներում:

Արկտիկայի վերելում ռեկորդային չափերի օգոնային անցք է



Արեւային ռադիացիայից պաշտպանությունը երբեք այսքան թույլ չի եղել: Կլիմայական փոփոխությունների եւ աղտոտող միջավայրի ազդեցությամբ օգոնային շերտը կրճատվել է 40 տոկոսով:

Վերջին երկու տասնամյակի ընթացքում Հյուսիսային բեւեռի վրա օգոնային շերտի բարակելը հասել է իր գագաթնակետին: Հիդրոօդերեւութաբանական միջազգային կազմակերպության տվյալներով, վահանը, որը պաշտպանում է Երկիրն արեւային ռադիացիայի ավելցուկից, կրճատվել է: Առաջացել է քաղցկեղով ու կատարակտով հիվանդությունների աճի, ինչպես նաեւ ծովային տարածքներում էկոհամակարգերի վնասվելու վտանգ՝ ներառյալ Ալյասկան, Սիբիրը եւ Սկանդինավիան:

Այստեղ ինչ-որ մեք ունի ֆրե-

նը, որը տասնամյակներ շարունակ օգտագործվում է սառնարաններում, դեզոդորանտներում ու համակարգիչների մաքրող համակարգերում:

- Արդեն երկար ժամանակ է, ինչ անցում է կատարվում ֆրեոնի փոխարինիչների, - ասում է Աբելյուսը՝ մթնոլորտի ֆիզիկայի դոցենտ Գվիդո Վիսկոնտին, - այդ խնդիրը կախարակական փայտիկի մեկ թափահարումով չի լուծվի: Ֆրեոնի մոլեկուլները երկար ժամանակ մնում են մթնոլորտում, եւ, նախահնդուստրիալ մակարդակին վերադառնալու համար պետք է սպասել մինչեւ 2050 թվականը: ՀԱԿ-ում վստահ են, որ խնդիրը պայմանավորված է մի շարք հիդրոօդերեւութաբանական պայմանների՝ ուժեղ քամիների, բեւեռային մրրիկների հետ, որոնք նպաստում են օգոնի քայքայմանը: Բայց կա եւս մեկ գործոն, որը դանդաղեցնում է Երկրի օգոնային շերտի առողջացումը՝ կլիմայի տաքացումը:

- Ածխաթթու գազի արտանետման հետեւանքներից մեկն էլ այն է, որ մթնոլորտի ներքին շերտերում տաքությունը պահպանվում է, երբ վերին շերտերում՝ ստրատոսֆերայում, CO₂-ը նպաստում է ինֆրակարմիր ճառագայթման նստահանմանը, ինչը հանգեցնում է ջերմաստիճանի իջեցման եւ օգոնային շերտի բարակեցման, - ասում է Վիսկոնտին:



արտակարգ իրավիճակների նախարարություն

Հայտարարություններ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը հայտարարում է ՀՀ ԱԻՆ աշխատակազմում քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնն զբաղեցնելու մասին

1. Պետական հրդեհային տեսչության երեսանի հրդեհային տեսչության տեսչական բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 34-4.2-11)

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացմանը, հաշվառում է սպասարկման տարածքում գտնվող օբյեկտների հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը, մասնակցում է հրդեհների առաջացմանը նպաստող պատճառների և պայմանների վերացման ուղղությամբ

միջոցառումների մշակման աշխատանքներին և Բաժնի վարչաիրավական գործունեության վերաբերյալ որոշումների հաշվառմանը, գործակալության կանոնակարգմանը, իրականացնում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները, իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Բաժնի պետ-ավագ տեսուչի հանձնարարությամբ նախատեսատուում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրագրություններ: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- առնվազն միջնակարգ կրթություն,
- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների ունակություններ (Ցանկեր N 1-2):

կան հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2):

Դիմող ՀՀ քաղաքացիները նախարարություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում (ծելը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- կրթությունը հավաստող պետական ցուցիչի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
- աշխատանքային գրքույկի պատճենը (ունենալու դեպքում),
- քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոնն զբաղեցնելու հավաստագրի պատճենը,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գրականչալից ներդրման փաստաթուղթը:

Նի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

- մեկ լուսանկար՝ 3 x4 սմ չափսի,
 - անձնագրի պատճենը:
- Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր՝ ժամը 14.30-ից մինչև 17.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 27.05.2011 թ.:

ՀՀ քաղաքացիները ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնն զբաղեցնելու համար կարող են դիմել նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Դավիթբաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8, հեռ. 36-15-62):

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը հայտարարում է մրցույթ՝ Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

1. Աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 34 -3.2 - 53)

Իրականացնում է Նախարարի և Աշխատակազմի ղեկավարի կողմից ստորագրված հրամանների հաշվառման, դրանց բնօրինակների պահպանության, առաքման, համապատասխան աշխատողներին տեղեկացնելու աշխատանքները, մասնակցում է քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում քաղաքացիական ծառայողների գրանցամատյանային տվյալների հավաքագրման և դրանք ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ ներկայացնելու, Աշխատակազմի առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի և այդ պաշտոնները զբաղեցնող

ընցնող քաղաքացիական ծառայողների առեստավորման նախապատրաստական աշխատանքներին, վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի անձնակազմի կառավարման հարցերով բողոքների, դիմումների և առաջարկությունների ուսումնասիրմանը և վերլուծմանը:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն
- քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդակցությունների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015 թ. հունիսի 22-ին՝ ժամը 14.15-ին ՀՀ

քային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015 թ. հունիսի 22-ին՝ ժամը 14.15-ին պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

• սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1,2):

Մրցույթը կանցկացվի 2011թ. հունիսի 22-ին՝ ժամը 14.15-ին ՀՀ

արտակարգ իրավիճակների նախարարության շենքում՝ Դավիթբաշեն 4 թաղամաս, Ա. Միկոյան փող.109/8 հասցեում:

Դիմող ՀՀ քաղաքացիները նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Դավիթբաշեն 4 թաղամաս, Ա. Միկոյան փող.109/8) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ծելը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար՝ մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ներ)ի, վկայական(ներ)ի, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գրականչալից ներդրման փաստաթուղթը:

կոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք

- մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի.
- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացի մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր՝ ժամը 09.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ մայիսի 27-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն (ք. Երևան, Դավիթբաշեն 4 թաղամաս, Ա. Միկոյան փող.109/8, հեռ. 36-15-62):

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը հայտարարում է մրցույթ՝ Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

1. Աշխատակազմի պետական հրդեհային տեսչության Լոռու մարզային հրդեհային տեսչության հրդեհների հաշվառման, վերլուծության և հակահրդեհային քարոզչության բաժնի գլխավոր մասնագետ-տեսուչ (ծածկագիր՝ 34-3.1-22)

Իրականացնում է բնակավայրերում և օբյեկտներում հրդեհային անվտանգության ու պահպանության կազմակերպմանը վերաբերող հարցերի քննարկում ու լուծում, հրդեհների հաշվառում և դրանց պատճառների վերլուծություն, իրականացնում է հանրապետության հրդեհային վիճակի վերաբերյալ եռամսյակային տեղեկատվությունների նախապատրաստման և տարածքային մարմիններին տրամադրման աշխատանքներ, տնտեսության օբյեկտներում և բնակավայրերում հրդեհային անվտանգության և հրդեհների հետ կապված իրավիճակի վերլուծությունների հիման վրա մշակում է աշխատանքային պլաններ:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կանցկացվի 2011 թ.

հունիսի 29-ին՝ ժամը 10-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում՝ Դավիթբաշեն 4 թաղամաս, Ա. Միկոյան փող. 109/8 հասցեում:

2. Աշխատակազմի պետական հրդեհային տեսչության Լոռու մարզային հրդեհային տեսչության հրդեհների հաշվառման, վերլուծության և հակահրդեհային քարոզչության բաժնի առաջատար մասնագետ-տեսուչ (ծածկագիր՝ 34-3.3-29)

Իրականացնում է հակահրդեհային քարոզչություն, բնակավայրերում և օբյեկտներում հրդեհային անվտանգության ու պահպանության կազմակերպմանը վերաբերող հարցերի քննարկում, հրդեհների հաշվառում և դրանց պատճառների վերլուծություն, հրդեհների վերլուծության և վիճակագրական խմբավորման հիման վրա համապատասխան եզրակացությունների նախապատրաստում, բնակչությանը հրդեհային անվտանգության կանոնների ուսուցում աշխատանքներ, իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ստուգումներ և հրդեհային հետազոտություններ կազմակերպություններում, հիմնարկներում, բնակելի շենքերում և առանձնատներում, կիրառում է վարչական պատասխանատվության միջոցներ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը

համապատասխան, մասնակցում է հրդեհների հաշվառման, վերլուծության և հակահրդեհային քարոզչության ոլորտներին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի մշակման և լրանշակման աշխատանքներին:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կանցկացվի 2011 թ. հունիսի 1-ին՝ ժամը 10-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում՝ Դավիթբաշեն 4 թաղամաս, Ա. Միկոյան փող. 109/8 հասցեում:

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն
- քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդակցությունների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

տական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1,2):

Դիմող ՀՀ քաղաքացիները նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Դավիթբաշեն 4 թաղամաս, Ա. Միկոյան փող. 109/8) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ծելը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար՝ մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ներ)ի, վկայական(ներ)ի, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

ի), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գրականչալից ներդրման փաստաթուղթը:
- մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.
- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացի մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր՝ ժամը 09:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2011 թ. մայիսի 27-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն (ք. Երևան, Դավիթբաշեն 4 թաղամաս, Ա. Միկոյան փող.109/8, հեռ. 36-15-62):



արտակարգ ժամանց

Արտակարգ իրավիճակների խճանկար

Կանացի պայուսակով

Ամիսներ առաջ Ռուսաստանի Ուլյանովսկ քաղաքի Կենտրոնական շուկայի վաճառողներն ու հաճախորդները տարահանվել են կեղծ ռուսների պատճառով:

Շուկայի տաղավարներից մեկում կասկածելի փաթեթ տեսնելով ու ենթադրելով, որ դա կարող է ռուս լինել՝ մարդիկ ահազանգում են



են ոստիկանություն: Դեպքի վայր հասած ոստիկանների ու փրկարարների օգնությամբ շուկայում գտնվող բոլոր մարդիկ տարահանվում են, տարածքը՝ շրջափակվում: Սակրավորները, հետագոտելով փաթեթը, պարզում են, որ դա ընդամենը թղթի մեջ փաթեթաված բջջային հեռախոս է, որին ինչ-որ անհասկանալի սխեմայով լարեր են միացված:

Ականատեսները կարողանում են նկարագրել այն տղամարդուն, որը փաթեթը թողել էր տաղավարում: Նրա տարբերիչ նշաններից մեկն էլ այն էր, որ շուկայում շրջող կասկածելի արտաքինով տղամարդը ձեռքին կանացի պայուսակ ուներ: Դեռ այդ «հանցանշանով» էլ ոստիկաններն արագ գտնում են ձերբակալում են կասկածյալին: Պարզվում է, որ 35-ամյա տղամարդն Ուլյանովսկի բնակիչ է, որն

արդեն մի քանի տարի հաշվառված է տեղի հոգեբուժական կլինիկայում: Ձերբակալման ժամանակ կասկածյալն իրեն հանգիստ էր պահում, սակայն այդպես էլ չի կարողանում ոստիկաններին բացատրել, թե ինչու է նման բան արել:

Դրամական ակերգիա

Մեծ Բրիտանիայում ապրող 33-ամյա Իվոն Սայմոնը տառապում է ակերգիայի հազվագյուտ տեսակով: Նա ակերգիա ունի կանիկ փողից:

Ցանկացած մանրադրամ կան թղթադրամ ձեռքում կարճատև պահելուց հետո նրա մաշկի վրա տղեղ ցան է առաջանում: Այդ երեւույթն Իվոնը վաղուց էր նկատել, սակայն միայն վերջերս է դիմել բժիշկների օգնությանը: Բժշկա-



կան հետազոտության արդյունքում պարզվել է, որ նրա ակերգիայի պատճառներն են մետաղը, որից պատրաստվում են մանրադրամները, եւ թղթադրամների գունավորման համար օգտագործվող հատուկ ներկերը: Ընդ որում՝ կինը նույնիսկ ձեռնոցով չի կարող դիպչել փողին, քանի որ լատեքսից նույնպես ակերգիա ունի:

Այս արտասովոր հիվանդության պատճառով, որն ի դեպ չի բուժվում, Իվոնը ստիպված է օգտվել միայն պլաստիկ քարտերից: Խնդրի լուծման հետաքրքիր տարբերակ է առաջարկել ակերգիայի հարցերով զբաղվող բարեգործական մի կազմակերպություն: Նրանք Իվոնին առաջարկել են բամբակյա ձեռնոցներ կրել, որպեսզի կարողանա իր մոտ նաեւ կանխիկ դրամ պահել:

Չույսի փայտակում

2008 թ. դեկտեմբերին շվեյցարական Ալպերում փրկարարները ծյան գերությունից երկու երիտասարդի են փրկում Լոթ-ի արծաթած լույսի շնորհիվ:

Երկու ֆրանսիացի երիտասարդ որոշել էին իրենց ամանորյա ժամանցը կազմակերպել դահուկային Սավոյնյին հանգստավայրում: Նրանք լեռներ են մեկնում առանց ուղեկցորդի եւ ավելի քան 2000 մետր բարձրության վրա մուլորվում: Արդեն երեկո էր, ու օդի ջերմաստիճանը գնալով ավելի էր ցածրանում:

Վերջապես հասկանալով, որ իրենք ինքնուրույն չեն կարող գտնել հետդարձի ճանապարհը՝ երիտասարդները որոշում են ահազանգել փրկարար ծառայություն: Սակայն ցրտից բջջային հեռախոսների մարտկոցները լիցքաթափվել էին, ու նրանք հասցնում են միայն հավաքել հեռախոսահամարը, որից հետո հեռախոսն անջատվում է: Բարեբախտաբար, ընկերները զլխի են ընկնում, որ իրենցից մեկի մոտ մնացած Լոթ-ի էկրանի լույսը կարող է որպես փարոս ծառայել եւ օգնել փրկարարներին գտնելու իրենց: Այդպես էլ լինում է:

Զբոսաշրջային կենտրոնի աշխատակիցները, անհանգստանալով երիտասարդների բացակայությունից, ահազանգում են փրկարար ծառայություն: Որոնողական աշխատանքներ սկսած փրկարարների ուշադրությունը գրավում

է հեռվում թույլ առկայծող լույսը:

Արդեն հաշված ռոպեներ հետո փրկարար ծառայության ուղղաթիռը երիտասարդներին, գերասեռնուն ախտորոշմամբ, տեղափոխում է հիվանդանոց:

Չանգ անապատից

2009 թ. հունվարին Ավստրալիայում հեռախոսազանգի շնորհիվ փրկարարները կարողանում են գտնել անապատի ավազաթմբերում կորած զբոսաշրջիկին:

Անապատում մոլորվելով՝ ռուսինացի տղամարդը վեց օր շարունակ առանց որևէ ուղեմիջի, իսկ վերջին երեք օրը նաեւ առանց սննդի, ջրի, միայնակ թափառում էր ավազաթմբերում: Երջանիկ պատահականությամբ՝ դեգերումների երրորդ օրը նա վերջապես հայտնվում է մի այնպիսի կետում, որտեղ բջջային կապը գործում էր, եւ նրա հեռախոսն աշխատում է: Տղամարդը կարողանում է զանգահարել տուն, Ռուսինիայում գտնվող իր ընտանիքին: Վերջիններս էլ կապվում են Ավստրալիայի փրկարար ծառայության հետ: Դրանից հետո կորած զբոսաշրջիկին գտնելու համար փրկարարներին եւս երեք օր է պահանջվում:

Ավստրալիայի հյուսիսային հատվածում գտնվող անապատները համարվում են տեղի ամենավտանգավոր վայրերից: Այնտեղ ուղեւորվելուց առաջ անհրաժեշտ է լավ մախապատրաստվել: Որոշելով ուսումնասիրել անապատի ավազաթմբերը՝ ռուսինացի զբոսաշրջիկը ճանապարհ ընկնելուց առաջ իր հետ ընդամենը 4



լիտր ջուր էր վերցրել: Սառնագետների վկայությամբ՝ դա ամերեականյեյի քիչ է, եթե հաշվի առնենք, որ նա պետք է 40 աստիճան շոգի պայմաններում մոտ 45 կիլոմետր ճանապարհ անցներ:

Քաղցից ու ջրազրկումից նրա օրգանիզմն այնքան էր հյուժվել, որ տղամարդը ճանապարհի վերջին մի քանի կիլոմետրը բառացիորեն սողալով էր հարթահարել՝ մի կողմ նետելով իր ուսապարկը: Բարեբախտաբար, բջջային հեռախոսը մնացել էր նրա գոտուց անրացված գրպանում, ինչն էլ փրկում է նրա կյանքը:

Պատվերով ավտոմեքենա ճիպտ	↔				Ձառիվեր	↔	Գետ եվրոպայում ճարտար. տարր	↔	Աճյուն, դիմացկուն Նվազակ- ցություն	↔
«... լուստ» Հոլով		Գլխատեղ Քնատ, կիսարթուն		Ճապոնա- կան կայսր ... Հոլ- մաթան	↔	Որակն է տալիս ... Հսկիչ	↔	Գերասիմի շունը «Պատվի համար»		
Վանք Խոր ... Խոփի հետքը	↔									
	↔		Սազործ	↔					Գինու տեսակ	
		Արեւահար Արարատ	↔						Դժգույն	Սուս ու ...
Փոքրիկ աղոթա- տեղի	↔	Հրա- ծգարան		Յող երգիչ ... Սաթելո- այան	↔			Արեւելյան դիւ «... Սուտրա»	↔	↔
					Թութակի տեսակ	↔				
Կոսիճուս Չորացրած միրգ	↔					Հույն փիլիսոփա	↔			
			Աշնան գույնը		Լենկ ... Պերճանքի առարկա	↔				Խորովածի «բավան»
Ալան...		Հակա երգչուհի ... Գա- պարյան	↔	↔		Մաշված կոշիկ	↔			↔
↔	↔	Չերու- րաշկայի ընկերը ...-դնող								
↔					Կատվի գոհը					
	↔	Այծն	↔							
↔										
		Անտո- րագիր	Ֆիւմ	↔						



Տեղի օգնություն: Արձագանք
Բժշկական օգնություն
Ուղեւորների համայնք
Տեղի օգնություն: Երկրագնաց

Ի Կոնստանտնուպոլիս
Առաջին հրշեջական կայան
Պրեմիեր Երկրագնաց
Սուրբ Երեմիայի հրեշտակ

Երկրագնացների կենտրոն
Տեղի օգնություն
Օգնություն: Երկրագնաց
Ի Կոնստանտնուպոլիս

Օգնություն: Երկրագնաց
Երկրագնացների կենտրոն
Երկրագնացների կենտրոն
Երկրագնացների կենտրոն

Երկրագնացների կենտրոն
Երկրագնացների կենտրոն
Երկրագնացների կենտրոն
Երկրագնացների կենտրոն
Ստորագրված է տպագրության
12.5.2011 թ.